ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» 03 2013թ. N: 61-Ա **ք.Գյումրի**

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈ ՓՈՂՈՑԻ 38Ա ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կամո փողոցի 38ա շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2003 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1310172 վկայականը, հաշվի առնելով Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հուլիսի 5-ի թիվ 949 որոշումը, ղեկավարվելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 5-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի բաշխման և 1999թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով.

Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված և Գյումրու քաղաքապետի կողմից հատկացված Գյումրի քաղաքի Կամո փողոցի 38ա շենքի թիվ 16 երեք սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝

Կարապետյան Սուրեն,
Կարապետյան Վարդանուշ,
Կարապետյան Գևորգ,
Թովմասյան Լուսինե Հովհաննեսի,
Կարապետյան Խաթուն,
Կարապետյան Մկրտիչ Սուրենի,
Կարապետյան Գայանե Գևորգի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է